



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Սովորողների ուսուցումը և դաստիարակությունը՝
«Համացանցին առընչվելու անվտանգության
կանոնները» թեմայի ուսուցման միջոցով

ԱՌԱՐԿԱ

Ինֆորմատիկա

ՀԵՂԻՆԱԿ

Ջենմա Շիրակյան

ՄԱՐԶ

Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Ակադեմիական վարժարան»

Բովանդակություն

Բովանդակություն.....	2
Ներածություն.....	3
Հիմնական մաս	4
ԳԼՈՒԽ I.....	4
1.1 Աշխատանքի անվտանգությունը համացանցում	4
1.2 Մուտքանունների և անցաբառերի ընտրություն.....	8
ԳԼՈՒԽ II.....	11
2.1 Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան.....	11
2.2 Վտանգավոր պարունակություն	14
2.3 Սեփական հետազոտության արդյունքներ և վերլուծություն	18
Եզրակացություն	21
Օգտագործված գրականության ցանկ	22

Ներածություն

Համացանցը գոյություն ունի բավականին երկար ժամանակ: Սակայն 1990-ական թվականներին, այն հավաքեց օգտագործողների և պաշարների այն առավելագույն քանակը, որը հանգեցրեց կապի հեղափոխության: Բարձր արագությամբ մոդեմները համակարգչից օգտվող սովորական օգտատերերին ավելի ուշ հնարավորություն տվեցին վայելելու համացանցի բոլոր հնարավորությունները:

Թեմայի նպատակը.

Սովորողը կարողանա տիրապետել ժամանակակից կյանքում համացանցում աշխատելու անվտանգության կանոններին:

Խնդիրները.

- ծանոթացնել համացանցում աշխատելու էթիկայի և անվտանգության հիմնական նորմերին,
- պարզել, թե ի՞նչ վտանգներ են սպասվում օգտվողին համացանցում,
- մշակել անունների և անցաբառերի ճիշտ ընտրություն,
- վերլուծել դեռահասների համար համացանցի առկայության դրական և բացասական կողմերը:

Թեմայի արդիականությունը.

Ժամանակակից տեղեկատվական հասարակության երեխան պետք է կարողանա աշխատել համակարգչով, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը տարբեր տեղեկատվական աղբյուրներից:

Անվտանգության խնդիրն առաջին տեղում է: Համացանցից, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու անվտանգությունը մեր ժամանակների ամենահրատապ և կարևոր թեմաներից մեկն է:

Այսօր տեղեկատվական և հաշվիչ համակարգերի ոլորտում հրատապ խնդիրներից մեկը ինտերնետում տեղեկատվության պաշտպանությունն է: Իրոք, քչերն են իրենց կյանքը պատկերացնում առանց էլեկտրոնային գլոբալ ցանցի: Մարդիկ տարբեր ֆինանսական գործարքներ են իրականացնում ինտերնետում, պատվիրում ապրանքներ, ծառայություններ, օգտագործում վարկային քարտեր, կատարում վճարումներ, զրուցում և ուղարկում հաղորդագրություններ, կատարում բազմաթիվ այլ գործողություններ, որոնք պահանջում են գաղտնիություն և պաշտպանություն:

Հիմնական մաս

ԳԼՈՒԽ I

1.1 Աշխատանքի անվտանգությունը համացանցում

Համացանցը ոչ միայն հսկայական քանակությամբ համակարգիչներն են, այլև անհավանական թվով մարդկանց բազմություն, ում համար ցանցը համարվում է շփման նոր ձև: Մարդը սոցիալական էակ է, և շփումը նրա համար համարվում է անհրաժեշտություն: Հետևաբար, մինչև հիմա տեխնիկայի ոչ մի հայտնագործություն (չհաշված հեռախոսը) աշխարհում այնպիսի հեղաշրջում չի առաջացրել, ինչպիսին մարդու շփումն էր մարդու հետ:

Սակայն պետք է իմանալ, որ համացանցից շատ օգտվելու դեպքում կարող է կախվածություն առաջանալ և համակարգչային կախվածությունը ոչ պակաս վտանգավոր երևույթ է, որքան թմրանյութերից կախվածությունը, որը բերում է հասարակության մեջ հարմարվողականության զգալի խախտմանը (անաշխատունակություն, ընտանիք չկազմելու ցանկություն կամ ուղղակի չի կարողանում մարդն ինքն իրեն ծառայել):

Համացանցից կախվածությունը հոգեկան խանգարում է, համացանցին միանալու կաշուն ցանկություն և հիվանդագին անկարողությունները թույլ չեն տալիս ժամանակին կտրվել համացանցից: Հետազոտողները տարբեր չափանիշներ են առաջ քաշում, որոնցով կարելի է քննադատել համացանց-կախվածությունը: Այսպես, Քիմբերլի Յանգը առաջ է քաշում չորս հատկանիշներ.

- Էլեկտրոնային հասցեն ստուգելու կաշուն ցանկություն,
- Համացանցից հերթական ելք ունենալու մշտական ցանկություն,
- Շրջապատողների դժգոհությունները առ այն, որ մարդը շատ ժամանակ է, անցկացնում համացանցում,
- Շրջապատողների դժգոհությունները առ այն, որ մարդը շատ գումար է ծախսում համացանցի վրա:

Չափանիշների ավելի մանրամասն համակարգ է ներկայացնում Իվան Գոլդբերգը: Նրա կարծիքով կարելի է փաստել այն հանգամանքը, որ համացանցից կախվածությունը առկա է նշված երեք կետերի առկայության դեպքում.

- Ինքնաբավարարման համար շփումից առաջացած հաճույքի զգացումը, որն առաջանում է համացանցում անցկացրած ժամանակի ընթացքում, սահմանակցվում է էյֆորիայի հետ,
- Եթե մարդը չի ավելացնում համացանցում անցկացրած ժամանակը, ապա այդ փաստը նկատելիորեն նվազում է,
- Օգտագործողը փորձեր է անում խուսափել համացանցից կամ գոնե քիչ ժամանակ է անցկացնում:

Համացանցում անցկացվող ժամանակի դադարեցումը կամ կրճատումը բերում է օգտագործողի վատ ինքնազգացողության, որը կարող է տևել մի քանի օրից մինչև մեկ ամիս և դրսևորվում է երկու կամ ավելի փաստերով.

1. Զգացմունքային և շարժողական գրգռվածություն,

2. Անհանգստություն,

3. Կպչուն մտքեր այն մասին, թե ի՞նչ է տեղի ունենում համացանցում,

4. Համացանցի մասին երևակայությունը և երազանքները,

5. Մատների կամա կամ ոչ ակամա շարժումները, որոնք հիշեցնում են աշխատանք ստեղնաշարի վրա:

Քիմբերլի Յանգը, հետազոտելով համացանց-կախվածությունը, բացահայտեց, թե ինչ են ամեն ինչից շատ օգտագործում: [4][Էջ142, 205էջ]

Համացանցի դրական գործառույթները: Համացանցի բացասական կողմերը և ազդեցությունները վեր հանելուց հետո, սակայն կարելի է թվարկել նաև դրական կողմերը:

Մարդիկ շփվում են այն մարդկանց հետ, ովքեր գտնվում են իրենցից հազարավոր կիլոմետրեր հեռու, փոխանակում են տեղեկատվություն, կարող են կատարել ամենատարբեր գնումներ՝ առանց տանից դուրս գալու և այլն...

Ինչպես գիտենք, մարդիկ գնումներ են կատարում համացանց-խանութներից: Ընտրում են անհրաժեշտ ապրանքը, տեղադրում այն համացանց-զամբյուղի մեջ և վճարում քարտից, բանկոմատից կամ վեբ-դրամապանակից: Համացանց-առևտուրը շատ արագ է ընդլայնվում: Առաջին հերթին գնվում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է համակարգչի աշխատանքի համար կամ ցանկացած գրասենյակային տեխնիկայի համար, տպիչների համար քարթրիջներ, տուփերով թղթեր, համակարգչային գրականություն: Միաժամանակ համացանցից ձեռք են բերվում տարբեր տեսակի ապրանքներ՝ հագուստ, սնունդ, կենցաղային, գրասենյակային, տեխնիկական իրեր: Համացանցից գնումներ կատարելը շատ

հարմար է, չնայած գոյություն ունի նաև ծառայության հակառակ կողմը: Գնորդները ֆորումներում արտահայտում են իրենց բողոքները՝ առաքման թերի համակարգի, բարձրացված գների, պատվերի բազմաքայլ բարդության, ոչ մեծ տեսականու, առաքմանը երկար սպասելու համար և ամենակարևորը, հնարավոր խաբեության համար:

Համացանցային գնումներ կատարելու համար անհրաժեշտ է ունենալ համացանց-դրամապանակ: Այն այնպիսի դրամապանակ է, որը ո՛չ տեսանելի է, ո՛չ շոշափելի, բայց գտնվում է առցանց տարածության մեջ: Այն տեսանելի է, սակայն համացանցային վճարման ժամանակ: Այդ գումարներով մարդիկ կարողանում են վճարումներ կատարել համացանց-խանութներում:

Մարդու վրա համացանցի ազդեցության դրական կողմերն են.[1][էջ 120, 192էջ]

- Ցանցում շահույթի ստացում և աշխատանքի որոնում
- Համացանցի միջոցով վճարման հնարավորություն և տարբեր ծառայությունների պատվերներ
- Շփումը մարդկանց հետ, հին ընկերների և դասընկերների որոնում
- Համացանցի միջոցով մշտապես կարելի է գտնել ցանկացած թեմայի վերաբերող ամենաթարմ նորություններ:

Մարդու վրա համացանցի ազդեցության բացասական կողմերը համացանցում գոյություն ունեցող ինքնասպասարկման ակումբներն են, թմրամոլների ակումբները և սկսնակ ահաբեկիչների ակումբները: Այդպիսի ակումբներում հնարավոր է պատվիրել անգամ սեփական մահը, սովորել ընտրել և օգտագործել թմրանյութերը: Եվ ի՞նչ... այստեղ ամեն ինչ կարելի է և ոչինչ էլ քեզ չի պատահի:

Եթե ստեղծաշարի, «մկնիկի» կամ էկրանի պատճառով կարող են տուժել տեսողությունը և լսողությունը, ապա հոգեվիճակի վրա առաջին հերթին ազդում են, այսպես կոչված, վիրտուալ գործոնները՝ խաղերը և համացանցը: Հենց սա է այն ամենը, ինչը «ձգում է», այն է, ինչից հնարավոր չէ կտրվել, այն է, առանց որի շատերը չեն պատկերացնում իրենց կյանքը, հենց սա է համացանցից կամ խաղերից կայուն կախվածությունը:

Ի՞նչ են ձեռք բերում երեխաները համացանցից, չէ՞ որ նրանք սպունգի նման ներծծում են ամեն ինչ: Բավական է մուտք գործենք մի քանի կայքեր, արդեն ամեն ինչ պարզ կլինի:

Համացանցում հայտնվել են հաքերներ, ովքեր չեն կարող ստեղծել, կարող են միայն ավերել, գողանալ, իրենց ճանապարհին հանդիպած ամեն ինչ՝ հանուն իրենց չար հաճույքի:

Մտածելու տեղիք է տալիս, թե ինչն է նրանց մղում համացանցում ամեն ինչ քանդելու... Ցավոք, համացանցում բացասական տեղեկատվությունը գերակշռող է:

Համակարգչի մոտ երկարատև աշխատանքը բացասաբար է անդրադառնում մեր օրգանիզմի վրա՝ նյարդային, իմունային, վերարտադրողական, տեսողական և ոսկրամկանային համակարգի վրա:

Այն մարդիկ, ովքեր իրենց կյանքն անցկացնում են համացանցում, նրանց անհրաժեշտ է սոցիալական աջակցություն, նրանք շփման մեջ ունենում են դժվարություններ, չբավարարված են, ունեն ցածր ինքնագնահատական, բարդությամբ լի լինում են, ամաչկոտ: Նրանք ընտրում են իրենց համար անվտանգ միջավայր և կյանքի նկատմամբ ոչ մի պարտավորվածություն չեն զգում: Բարդացնում են բնավորությունը, ձեռք բերում բնավորության նոր գծեր: Անառարկելի է, որ այսպիսի կենսակերպն ու մտածելակերպը տարածվում է կյանքի բոլոր ոլորտներում և մարդն սկսում է այլ կերպ մտածել և գործել: Նա արդեն այլ կերպ է լուծում կենցաղային, ընտանեկան, անձնական, մասնագիտական և այլ հարցեր: Համացանցից կախվածություն ունեցող մարդը կարող է ունենալ հետևյալ հոգեբանական ախտանիշներ.

- համակարգչի մոտ լավ ինքնագագացողություն կամ էյֆորիա,
- համակարգչի մոտ անց է կացնում երկար ժամանակ,
- անտեսում է ընտանիքի անդամներին և ընկերներին,
- համակարգչից հեռու գրգռվածություն, դեպրեսիա, դատարկության զգացում,
- ընտանիքի անդամներից և գործատուներից սեփական գործունեությունը թաքցնելը,
- խնդիրներ ուսման մեջ և աշխատանքում:

Մարդը մշտապես ընտրության իրավունք ունի: Մեծ մասամբ ինքն է որոշում, թե ինչն է լավ իր համար, թե ինչպես կկարողանա իրեն դրսևորել, ինչ է ուզում ստանալ...

Համակարգիչը կարող է լինել և՛ լավ ընկեր, և՛ թշնամի, կարող է օգնել նեղության մեջ կամ նույնիսկ առաջացնել հսկայական խնդիրներ, կարող է օգնել գտնելու համախոհներ կամ էլ տանել մենության...

Ընտրությունը, իհարկե, մերն է...

1.2 Մուտքանունների և անցաբառերի ընտրություն

Պետք է գիտենալ, որ գաղտնաբառը մեր տեղեկատվության պաշտպանությունն է, որը պետք է գաղտնի պահել: Չպետք է թույլ տալ հիշել գաղտնաբառը բրաուզերի քեշում: Հաճախ պետք է փոխել գաղտնաբառերը՝ օգտագործելով մեծատառեր և փոքրատառեր, թվեր և այլ սիմվոլներ: Խնդիրն այստեղ հասունկ ծառայությունների մեջ չէ, որոնք, հնարավոր է, վերահսկում են հաղորդագրությունները: Հայտնվել են շատ ծրագրեր, որոնք գողանում են գաղտնաբառերը տարբեր համակարգիչներից, այնուհետ օգտագործում են սեփական շահի համար, օրինակ՝ գովազդի:

Միևնույն ժամանակ, չպետք է բացել անձանոթներից եկած պանակները կամ հղումները: Իհարկե, ընդհանրապես թաքցնել էլեկտրոնային հասցեն՝ հնարավոր չէ. այն անհրաժեշտ է շատ կայքերում գրանցվելու համար: Բայց սպամից պաշտպանվելու համար պետք է փոստի կարգավորումներում տեղադրել «ստանալ նամակներ միմիայն ստուգված կոնտակտներից» տարբերակը: Մնացած բոլոր նամակները ավտոմատ կտեղափոխվեն առանձին պանակ, և հեշտությամբ կարելի է դրանք տեսակավորել՝ բաժանելով հուսալի և հեռացման ենթակա հաղորդագրությունների:[2][էջ 198, 264էջ]

Համակարգչում պետք է տեղադրել հակավիրուսային ծրագիր և պարբերաբար այն թարմացնել (antivirus, antispyware, antimallware): Պետք է հակավիրուսի միջոցով միշտ ստուգել բեռնված նյութերը, այդ թվում նաև կցված տարօրինակ պանակները ծանոթների նամակներում, եթե մինչ այդ նրանք ոչինչ չէին ուղարկում: Ուշադրություն պետք է դարձնել ուղարկողի հասցեին: Հաճախ վիրուսները տարածվում են ծանոթ հասցեները նմանակող նամակների միջոցով, որոնք տարբերվում են 1-2 նիշերով:

Զգուշությամբ պետք է բացել AVI, EXE, XLS, PPT և ZIP ֆայլերը: Խուսափել .txt.exe, .jpg.exe և նման տեսակի ֆայլեր բացելուց: Ապահովության համար չպետք է բացել կամ բեռնել ֆայլերը (երաժշտություն, ֆիլմեր, խաղեր) կասկածելի աղբյուրներից: Չպետք կուրորեն հավատալ այն ամենին, ինչ տեսնում ենք կամ կարդում համացանցում: Կայքը կարող է ունենալ վստահելի և համակրելի տեսք, բայց դա ոչ ոքի չի ապահովագրում ոչ ստույգ և ոչ ճշգրիտ տեղեկատվությունից: Բազմաթիվ գովազդներ և բացվող պատուհաններ ունեցող կայքերի տեղեկատվությունը հաճախ հավաստի չէ:

Պետք է զգուշանալ հույզերը և զգացմունքները բաց հրապարակելուց: Այն, ինչ հեշտությամբ կարող ենք թույլ տալ անձնական նամակներում ընկերների հետ, դեպքերի

մեծ մասում նախատեսված չէ անձանոթների համար: Մինչ որևէ անձնական իրադարձության մասին համացանցում պատմելը, պետք է մտածել, արդյոք արժե, որ դա իմանան անձանոթ մարդիկ: Չէ՞ որ ոչ ոք չգիտի, թե ինչպես կընդունվի անկեղծությունը և կօգտագործվի: Մոցցանցերում անձնական օրագիր վարելու կամ բլոգում անձնական զգացմունքներով բանաստեղծություն տեղադրելիս, պետք է սահմանափակել ազատ հասանելիությունը ուրիշների համար: Անձանոթների ռեակցիան անկեղծ զգացմունքներին և անձնական բացահայտումներին կարող է լինել շատ տարբեր: Հաճախ դիմացինի անկեղծությունը թույլ է տալիս հասկացողության և աջակցության պատրվակով խաբել նրան և օգտագործել: Հնարավոր է նաև, որ նա դառնա անանուն օգտատերերի ծաղրանքի առարկան:

Պետք է հետևել հաղորդակցման պարզագույն կանոններին և խուսափել համացանցային «կռիվ գցողներից» (տրոլերից):

Չնայած մենք չենք տեսնում զրուցակցին՝ առցանց շփվելու կանոնները նույնն են, ինչ իրական կյանքում՝ շփման ժամանակ: Չպետք է գրել այն, ինչ չէինք ասի մարդու երեսին: Վատ խոսքերը, կոպտելը, ագրեսիվությունն անթույլատրելի են, ինչպես և իրական կյանքում: Եթե նույնիսկ հակառակ կողմից օգտագործվում են վիրավորական արտահայտություններ, չարժե լեզվակովի վերածել: Միշտ կարելի է անտեսել տհաճ հաղորդագրությունները կամ պարզապես արգելափակել այն օգտատերերին, որոնք ներքաշում են այսպիսի խոսակցությունների մեջ: Դա սովորական «կռիվ սարքոց է» (trolling)՝ համացանցային օգտատերերի շրջանում վեճերի ստեղծում և մասնակիցների գրգռում: Եթե համացանցում որևէ բան շփոթեցնում է կամ կասկածելի է թվում, երբեք ուշ չէ խորհրդակցել վստահելի մարդու հետ:

Պետք է իմանալ, որ էջը անձնական տիրույթ է: Մոցիալական ցանցի ծանոթների մեծ մասը հանդիսանում են մեր իրական ընկերները: Իհարկե, մենք կարող ենք ընկերանալ նաև ծանոթների ընկերների հետ: Բայց երբեմն ընկերության առաջարկ է գալիս նաև լրիվ անձանոթ մարդուց: Այդպիսի առաջարկներ ընդունելիս, դիմում ենք ռիսկի, այն իմաստով, որ ընկերների հետ ազատ և հաճույքով կիսվող տեղեկատվությունը հասանելի կլինի նաև մեզ լրիվ անձանոթ մարդուն: Միշտ կարելի է մերժել ընկերության առաջարկը, դրանում ոչ մի ամոթ բան չկա, չէ՞ որ դա անձնական տիրույթ է, և որոշողը մենք ենք:

Վիրտուալ ծանոթների հետ չպետք է շտապել հանդիպել: Ինչքան էլ հետաքրքիր, ընկերական և հաճելի է թվում համացանցային ծանոթը, նա կարող է լիովին տարբերվել

իրական կյանքում: Այն, ինչ մարդիկ պատմում են իրենց և սեփական կյանքի մասին համացանցում, ստուգելը դժվար է: Իսկ եթե համացանցային ընկերը պնդում է հանդիպել, ապա պետք է լուրջ մտածել... Վիրտուալ ընկերոջ հետ ծանոթանալու համար հանդիպումը պետք է նշանակել ցերեկվա ժամին, մարդաշատ վայրում և զգուշացնել, որ ընկերոջ կամ որևէ մեծահասակի հետ կգնաք: Նրա տված պատասխանը ամեն ինչ ցույց կտա: Եթե վիրտուալ ծանոթը իսկապես նա է, ինչ ձևանում է, ապա այդ առաջարկին կվերաբերվի նորմալ: Եթե առանձին հանդիպելու վերաբերյալ անվստահությունը առաջ կբերի դժգոհություն կամ ծաղրանք, ապա այդ հանդիպումը պետք է չեղյալ հայտարարել:

Եթե համացանցում ինչ-որ մեկը, հատկապես անծանոթը, ցանկանում է խոսել սեռերի միջև փոխհարաբերությունների մասին, պետք է շատ զգոն լինել: Վիրտուալ աշխարհում հնարավոր չէ հասկանալ հաղորդակցվողի մտադրությունները: Ցանկացած սեռական բնույթի արտահայտություն կամ ենթատեքստ, որն ուղղված է անչափահասին, մտավախության լուրջ տեղիք է տալիս: Եթե հնարավոր չէ ինքնուրույն դադարեցնել շփումը տվյալ անձի հետ, հանել կոնտակտների ցանկից կամ արգելափակել նրա հաղորդագրությունները, անմիջապես պետք է դիմել օգնության: Սա կատակ չէ:

ԳԼՈՒԽ II

2.1 Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան

- Առանց ծնողների թույլտվության որևէ անձնական ինֆորմացիա (գաղտնաբառ, անուն-ազգանուն, հեռախոսի համար, հասցե, դպրոցի համար և այլն) մի՛ հայտնեք Համացանցի ձեր նոր ծանոթներին:[3][էջ 52, 111 էջ]
- Եթե շփոթեցնող ինֆորմացիա էք ստանում կամ հայտնվում էք երկրնտրանքի առջև, մի՛ փորձեք ինքնուրույն գլուխ հանել. դիմեք ծնողների կամ ուսուցիչների օգնությանը:
- Համացանցում ծանոթացած նորահայտ անձի հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, բայց եթե, այնուամենայնիվ, որոշել էք հանդիպել նրան, ապա գնացեք ծնողների հետ:
- Մի բացեք այն էլեկտրոնային նամակը, ֆայլը կամ Web էջը, որը ստացել էք անհայտ կամ վստահություն չներշնչող անձից:
- Բացի ընտանիքի անդամներից՝ ոչ մեկին մի վստահեք ցանց մուտք գործելու ձեր գաղտնաբառը. դա հետագայում կարող է տհաճությունների կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:
- Մշտապես պահպանեք Համացանցային անվտանգության կանոնները. դրանք ստեղծվել են, որպեսզի ցանցում ձեզ անվտանգ և անկաշկանդ զգաք:
- Էլեկտրոնային հաղորդակցության ընթացքում բարեկիրթ եղեք, չէ որ նույնը սպասում էք հաղորդակցից:
- Համացանցում աշխատելիս սովորեք հարգել այնտեղ ընդունված օրենքները. դրանք կարող են տարբեր լինել՝ կախված հաղորդակցման միջավայրից: Ծանոթացեք համապատասխան տեղային կանոններին՝ նախքան առաջին հաղորդագրությունն ուղարկելը:
- Հարգանքով վերաբերվեք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում էք: Հիշեք, որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է, այլև շատերի համար՝ թանկ:
- Հետևեք ուղղագրության և քերականության կանոններին:
- Հարգեք գիտակների խորհուրդները և ինքներդ էլ գիտելիքներով օգնեք այլոց:
- Եթե բանավեճի ընթացքում կրքերը բորբոքվել են, ապա վարվեցողության թույլատրելի նորմերը չխախտեք նույնիսկ այն դեպքում, երբ դիմացինը ձեզ դրդում է դրան:

- Հարգանքով վերաբերվեք այլոց կարծիքին և սեփականությանը: Եթե ցանկանում եք ցանցում մնալ չճանաչված, ապա ընդունեք, որ ձեզ հետ հաղորդակցվողը ևս ունի այդ իրավունքը: Ձեզ հղված ինֆորմացիան մի հրապարակեք՝ առանց ուղարկողի թույլտվությունը ստանալու:
- Ցանցում մի չարաշահեք ձեր ազդեցությունը. վստահություն ձեռք բերելը դժվար է, կորցնելը՝ հեշտ:
- Անկախ նրանից, թե այլոք պաշտպանում են ցանցում հաղորդակցվելու էթիկայի կանոնները՝ դուք անշեղորեն հետևեք դրանց:

Կայքերում գրանցվելիս, հնարավորության դեպքում խուսափել ներմուծել անձնական տվյալները՝ տան կամ բջջային հեռախոսի համարները, տան հասցեն:

Պետք է զգուշանալ սոցիալական ցանցի անձնական էջում նկարներ տեղադրելուց: Դա, իհարկե, չի նշանակում, որ պետք է մեկուսանալ ամբողջ աշխարհից և լուսանկարի փոխարեն տեղադրել սև քառակուսի: Խոսքը անձնական նկարների մասին է, որոնք տեղադրվում են համացանցում, օրինակ՝ ընկերական խնջույքներից, նամանավանդ, որոնք կարող են դուրեկան չլինել կամ սխալ մեկնաբանվել ուրիշների կողմից: Դա հեշտությամբ կարող է մեր մասին սխալ պատկերացում ստեղծել: Չէ՞ որ ցանկացած օգտատեր կարող է տեսնել այդ նկարները:

Վիճակագրության համաձայն, գործատուների ավելի քան 60% փնտրում են համացանցում լրացուցիչ տեղեկատվություն հավակնորդի մասին, հատկապես այնպիսի սոցցանցերում, ինչպիսիք են Ֆեյսբուքը, Թվիթերը և այլն: Բացի այդ, կասկածելի բովանդակությամբ նկարները և այլ անպարկեշտ տեղեկատվությունը կարող են ամաչեցնել և վանել երիտասարդին կամ աղջկան: Եվ որպես ծայրահեղություն՝ օրերից մի օր մեկնումեկը կարող է պատճենահանել այդ անպարկեշտ նկարները և տարիներ հետո դիմել նենգագործության (շանտաժի):

Այն մասին, թե ինչպես են մեզ խաբում համացանցում: Դպրոց-սպորտ-պարապմունք-

տնային առաջադրանքներ՝ մեր օրը հազեցած է և կարծես թե զբաղված է ամեն բոլորով: Ե՞րբ և որտե՞ղ ծանոթանալ նոր մարդկանց հետ: Բնական է, այնտեղ, որտեղ անցկացնում ենք մեր ազատ ժամանակը՝ համացանցում: Բայց...[6][30/07/2022]

Ծանոթությունները և շփումը համացանցում տարածված են: Դրանում չկա որևէ տարօրինակ բան, չէ՞ որ համացանցը համախոհներ, ընկերներ և նույնիսկ սիրած անձին

գտնելու ամենահեշտ տարբերակներից է: Առցանց շփումների մեջ կան տարբեր տարիքի մարդիկ: Մի մասը ծանոթանում են հենց այնպես՝ շփվելու նպատակով, մյուսները նոր ծանոթություններ հաստատելու, միասին կինոթատրոն գնալու նպատակով:

Երբեմն առցանց շփումները վերածվում են կայուն և իրական հարաբերությունների: Ոմանք ֆորումին նախընտրելի թեման քննարկելիս՝ գտնում են համախոհներ, այս եղանակով կարող են շփվել և սեփական փորձով կիսվել որևէ խնդիր կամ նույն հիվանդություն ունեցող մարդիկ, ոմանց համար տվյալ խմբի ծանոթը հետագայում դառնում է նաև սիրելի մարդ: Սակայն ինչպես և իրական կյանքում, համացանցում կարելի է հանդիպել մարդկանց, որոնք ավելի մոտիկ ծանոթության դեպքում երևում են այլ կերպ՝ լրիվ տարբերվելով առցանց տպավորություններից: Իրական և պատկերացված մարդկանց միջև տարբերությունները հանդիպում են բոլորիս և բավականին հաճախ:

Մարդկային շփումների այսպիսի հակասությունները, միանալով համացանցի մեծ հնարավորություններին, առաջացրել են վտանգների մի նոր տարբերակ՝ առցանց շփման ռիսկեր:

Փորձենք դրանք վերլուծել և հասկանալ: Առաջին հերթին, դա այլ օգտատերերի կողմից վիրավորանքի և հետապնդման ենթարկվելու ռիսկն է: Բոլորն էլ լսել են համացանցում օգտատերերի հետապնդման, կիբեբբոնության (cyberbullying) և տրոլինգի (trolling) մասին: Այս երկու հասկացությունները տարբերվում են, սակայն խոսքը գնում է նույն բանի մասին, երբ համացանցի մեկ օգտատերը հետապնդում է ուրիշին՝ վիրավորական, ագրեսիվ և վախեցնող հաղորդագրություններ ուղարկելով նրան կամ ընդհանուր ծանոթներին:

Այդ նպատակով օգտագործվում են տարբեր զրուցարաններ, սոցցանցեր, առցանց հաղորդագրություններ, ֆորումներ, բլոգներ և ամեն ինչ, որտեղ հնարավոր է գրել մեկնաբանություններ: Երբեմն պատահում է, որ առցանց շփումով գործը չի սահմանափակվում, և հաղորդակիցը ամեն կերպ փորձում է իր ընկերոջը ներքաշել հետագա հարաբերությունների մեջ: Հաճախ համացանցում մարդիկ չեն բացահայտում իրական անունները, տարիքը, զբաղմունքները, ստեղծելով այնպիսի պատկեր, որը շատ հեռու է իրականությունից: Իսկ թե ո՞վ կհայտնվի հնարամիտ, հասկացող և բարեհամբույր մարդու դիմակի տակից՝ կանխագուշակել դժվար է: Բազմաթիվ լավ մարդկանց մեջ կարող են հանդիպել նաև նրանց, ով սովոր է չարաշահել ուրիշների վստահությունը սեփական շահերի համար: Ահա թե ինչու համացանցը քաշում է անօրինական շփում փնտրողներին:

Մասնագետները «անօրինական շփում» են կոչում մեծահասակի և անչափահասի «ընկերությունը» կամ շփումը, երբ մեծահասակը փորձում է համոզել երեխային սեռական կապերի մեջ մտնել կամ ներքաշում է հանցավոր գործունեության մեջ:

Դա կարող է լինել ուղղակի հետապնդում, համառ ձգտում՝ նկրտում՝ վիրավորանքներով, սպառնալիքներով, կոպիտ կատակներով և անպարկեշտ լուսանկարների ցուցադրմամբ: Տարածված է նաև ավելի «մեղմ» տարբերակը, երբ մեծահասակը շփվում է համացանցում անչափահասի հետ՝ ձևանալով նրա հասակակիցը, որպեսզի հաստատի մտերմիկ հարաբերություններ և հետագայում ունենա անձնական հանդիպում՝ առաջարկելով միասին գնալ կինո կամ սրճարան:

Հանցագործները սովորաբար լավ ճանաչում են երիտասարդների հոգեբանությունը և հնարամտորեն օգտագործում են դա իրենց շահերի համար: Շփվելով ընկճված վիճակում գտնվողների հետ՝ նրանք կարեկցում են, առաջարկում օգնություն, քննարկում են հուզող հարցերը՝ աստիճանաբար տանելով դեպի այլ հարթակ, իսկ հետո առաջարկում են անցնել իրական հարաբերությունների: Այսպիսի շփումը ուղղված է երիտասարդներին օրինազանց գործունեության կամ սեռական հարաբերությունների մեջ ներգրավմանը: Եթե որևէ մեկը առնչվել է նման դեպքերի, անմիջապես պետք է դիմել վստահելի մեծահասակի օգնության: Հաճախ դա խնդիրը լուծելու միակ տարբերակն է:

2.2 Վտանգավոր պարունակություն

Ժամանակակից մարդուն տարբեր հարցերում փորձագետ դառնալու համար պետք չէ երկար նստել գրադարաններում և կարդալ ձանձրալի գրքեր: Ընդամենը պետք է մտնել համացանց և այնտեղ ամեն ինչ կա: Սակայն այսպիսի հեշտ հասանելի տեղեկատվությունը ունի բացասական կողմեր՝ հաճախ այն ճշգրիտ չէ, երբեմն՝ նույնիսկ՝ վտանգավոր: [5][30/07/2022թ]

Համացանցը ցանկացած հարցով տեղեկատվության անսահման աղբյուր է: Սակայն անհրաժեշտ նյութերը որոնելիս, միշտ էլ վտանգ կա, որ տեղեկատվությունը սխալ է, ոչ կոռեկտ (կանխամտածված կամ ակամա), կամ կարող ենք նույնիսկ հանդիպել կիրբերբռնության: Այն տեղեկատվությունը, որ ներկայացվում է ագրեսիվ կերպով, լի է մարդկանց նկատմամբ ատելությամբ, կամ այն տեքստերը, որոնք պարունակում են վատ

կամ անպարկեշտ բառեր, կոչում են ինքնասպանության, պարունակում են պոռոնոգրաֆիկ բնույթի նկարներ, այդ ամենը ոչ միայն հաճելի չէ, այլ նաև՝ վտանգավոր:

Ցավոք, այսպիսի տեղեկատվությունը լիքն է համացանցում՝ ճանաչված մարդկանց մասին կայքերում, խաղերի էջերում, տարբեր ապրանքներ և ծառայություններ գովազդող կայքերում (հայտկապես այնտեղ, ուր սովորաբար տանում են դուրս թռչող/հայտնվող պատուհանները կամ որոշ գունազարդ և ուշադրությունը գրավող նկարները), պատահում են նաև սոցցանցերում, բլոգերում, տեսահոստինգներում և տորրենտներում: Նմանատիպ նյութեր կարելի է ստանալ նաև անձանոթներից՝ նամակների միջոցով:

Ի՞նչ կարդալ կամ դիտել, հավատա՞լ կամ չհավատալ՝ ինչպես կյանքում, այնպես էլ համացանցում, օգտատերն է որոշում: Այն կախված է յուրաքանչյուրի դաստիարակությունից, կրթության մակարդակից, հետաքրքրությունների շրջանակից և ի վերջո՝ ճաշակից: Սակայն կան մի քանի պահեր, որ պետք է հաշվի առնել՝ մինչ անձայրաձիր համացանցում շրջագայության մեկնելը:

Առաջին հերթին՝ համացանցը լի է սխալ և չստուգված տեղեկություններով, ուստի պետք է ստուգել այն ամենը, ինչ իմանում ենք համացանցից: Ճիշտ է, երբեմն դժվար է ծնողներին հարցեր տալ (հատկապես, երբ խոսքը գնում է սեռական կյանքի կամ հարաբերությունների մասին): Այդ դեպքերում պետք է օգտվել դեռահասների և երիտասարդների համար նախատեսված հատուկ բժշկական, հոգեբանական կամ այլ հուսալի կենտրոնների կամ կազմակերպությունների կայքերից կամ այլ աղբյուրներից, որտեղ հուզող հարցերի պատասխանները ներկայացված են հասկանալի և ճիշտ ձևով: Չէ՞ որ համացանցում և սոցցանցերում, հատկապես «անանուն» խմբերում, հենց այդ հարցերի պատասխանները ճիշտ չեն:

Երկրորդը՝ համացանցում հանդիպում է նաև «բացասական լիցքավորված պարունակություն», որը լինում է 2 տեսակի.

Առաջինը անօրինական նյութերն են, որոնց տարածումը պատժելի է: Դա նշանակում է, որ օգտատերերը և նյութերի հեղինակները ստեղծման և տարածման համար կարող են ենթարկվել ինչպե՛ս վարչական, այնպե՛ս էլ քրեական պատասխանատվության: Ապօրինի են մանկական պոռոնոգրաֆիան, թմրամիջոցների ստեղծման և օգտագործման մասին նյութերը, ռասսայական կամ կրոնական ատելության, մարդկանց կամ կենդանիների նկատմամբ բռնության և դաժանության, ինքնասպանության և ահաբեկչության հրահրող

նյութերը: Այդպիսի բաների հանդիպելու դեպքում պետք է դիմել անվտանգության համապատասխան մարմինների օգնությանը (www.police.am/home.html):

Երկրորդ տեսակը հասարակության կողմից անընդունելի նյութերն են: Ճիշտ է, այդպիսի նյութերը չեն համարվում ապօրինի, սակայն դա չի նշանակում, որ դրանք անվտանգ են: Նյութեր կան, որոնք պարունակում են վատ խոսքեր, վիրավորանքներ, նվաստացնող, արժանապատվությունը ստորացնող նկարներ, պոռնոգրաֆիկ բնույթի նկարներ կամ տեքստեր: Մեկ այլ վտանգ, որ պարունակում է համացանցը՝ ինտերնետ խաբեբաններն են և խարդախության ենթարկվելու վտանգը: Համացանցային խաբեբանների ծուղակը կարող է թվալ անմեղ՝ որևէ ֆիրմայի կամ խանութի կեղծ կայք: Հաճախ խաբեբանները հայտարարում են լոտոյում խոշոր շահումի մասին կամ առաջարկում են խաղալ, բախտը փորձել, գովազդում են տարբեր ապրանքներ և ծառայություններ, լավ վարձատրվող աշխատանք, արագ հարստանալու հնարավորություն, արագ նիհարելու, տարբեր հիվանդություններից բուժվելու, սեռական գրավչությունը բարձրացնելու և այլ միջոցներ և հնարքներ: Ո՛չ, դու ոչինչ էլ չես շահել: Իսկ եթե սեղմես, ամենայն հավանականությամբ, ձեռք կբերես համակարգչից հետ խնդիրներ: Որոշ ինտերնետ-խաբեբաններ ուղարկում են գումարի խնդրանքով նամակներ, օրինակ՝ երեխայի բուժման կամ կենդանիներին օգնելու համար:

Այդ նպատակով հաճախ խնդրում են ուղարկել հաղորդագրություն (SMS), գրանցվել կայքում և նշել անձնական տվյալները, գաղտնաբառերը, կոդերը կամ վճարել առցանց՝ բանկային քարտով: Այսպիսի դեպքերում չպետք է հավատալ և դառնալ խարդախության հերթական զոհը: Խաբեբանների հիմնական նպատակն է՝ դրամ շորթելը, անձնական տեղեկություններ կամ օգտատերերի բանկային տվյալներ ստանալը: Եթե հանցագործները ստանան որևէ մեկի անձնական տվյալները, ապա վտանգի կենթարկվի ոչ միայն իր կամ ծնողների գումարը, այլ նաև այդ անձի անունն ու համբավը: Ի՞նչ գիտես, թե ինչպես կօգտագործվի գողացված տեղեկատվությունը...

Հարաբերություններ համացանցում. «կո՞ղմ», թե՞ «ղեմ»:

Հեռախոսում նոր հաղորդագրություն ստանալու մասին ձայնային ազդանշանը ստիպում է օրական հարյուր անգամ ստուգել էլ. փոստը, իսկ համացանցում մենք ավելի շատ ժամանակ ենք անցկացնում, քան թե իրական կյանքում: Վիրտուալ կամ առցանց հարաբերություններն սկսվում են հենց այդպես. չէ՞ որ էկրանի հետևում կարծես թե գտնվում է ցանկալի անձնավորություն: Չափից ավելի օգտվելու դեպքում համակարգիչը և

համացանցը ունեն ապացուցված բացասական ազդեցություն առողջության վրա: Դրանք նպաստում են նստակյաց վարքագծի ձևավորմանը, քաղցրավենիքի և քաղցր գազավորված ըմպելիքների չարաշահմանը, քանի որ համակարգչով (ինչպես և հեռուստատեսությամբ) կլանված վիճակում հաճախ դժվար է վերահսկել ընդունած սննդի քանակը: Հնարավոր է նաև հակառակ մի երևույթ՝ տարվելով վիրտուալ կյանքով, մարդը մոռանում է քաղցի, ինչպես և այլ կարիքների մասին:

Ի դեպ, այդպիսի դեպքեր եղել են: Նաև որոշ համակարգչային խաղերը, հատկապես ուղեկցվող պատերազմական գործողությունների դաժան տեսարաններով, նպաստում են բռնության, ագրեսիվ և ռիսկային վարքագծի դրսևորմանը: Մարդը կտրվում է իրականությունից և կարող է խնդիրներ ունենալ իրական կյանքում մարդկանց հետ շփվելիս: Ապացուցված է, որ համակարգչի և սոցիալական ցանցերի չարաշահումը նպաստում է կախվածության զարգացմանը, որն արտահայտվում է համակարգչի կամ անընդմեջ առցանց լինելու անհաղթահարելի ձգտումով, անհանգստությամբ, անքնությամբ, ընտանիքի և շրջապատի նկատմամբ անուշադրությամբ, ուսումնական առաջադիմության անկումով, պատասխանատվության զգացումի բացակայությամբ և տեխնիկական նորությունների ձեռքբերման համար գումարների զգալի ծախսերով:

Համակարգչի և բջջային հեռախոսների չարաշահումը նպաստում է նաև տեսողության և ոսկրամկանային խնդիրների առաջացմանը: Այդ պատճառով խորհուրդ է տրվում համակարգչով աշխատանքի ընթացքում հաճախ ընդմիջումներ անել և կատարել աչքերի համար վարժություններ: Մասնագետները դպրոցականներին խորհուրդ են տալիս համակարգչի առջև անցկացնել ընդհանուր առմամբ օրական 1.5-2 ժամից ոչ ավել: Այդ իսկ պատճառով, մինչ համացանցում որոնումների մեջ խորասուզվելը, հակիրճ ամփոփենք այն վտանգները, թակարդները և ծուղակները, որոնք թաքնված են համացանցում և կարող են իսկական վնաս հասցնել անփորձ ինտերնետ օգտատերերին:

Էլեկտրամագնիսական ճառագայթներից պաշտպանվելու համար խորհուրդ է տրվում ձեռք բերել հեղուկաբյուրեղային մոնիտոր: Բլոկը և մոնիտորը պետք է հնարավորինս հեռու գտնվեն օպերատորից, համակարգիչը երկար ժամանակ միացված չթողնել, մոնիտորը տեղադրել անկյունում, որպեսզի ճառագայթները կլանվեն պատերի կողմից, համակարգիչը հողակցել: Դպրոցականները պետք է մոնիտորի առջև նստեն 2 ժամից ոչ ավելի և յուրաքանչյուր կես ժամը մեկ կատարեն 10-15 րոպե տևողությամբ ընդմիջում:

2.3 Մեփական հետազոտության արդյունքներ և վերլուծություն

Հետազոտության ուրաքանչյուր փուլում կիրառվել են ուսուցման հատուկ ձևեր և մեթոդներ՝ տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Տեղեկատվական անվտանգության հմտությունների և մշակույթի ձևավորումն իրականացվում է ոչ միայն ինֆորմատիկայի դասերին, այլև այլ առարկաներից (օրինակ՝ հասարակագիտություն և այլն), ինչպես նաև արտադասարանական աշխատանքներում:

Ծրագրի շրջանակներում իրականացվեց հարցադրում՝ երեխաների և ծնողների համար կլոր սեղանի անցկացում «Ինտերնետում անվտանգության հիմունքները» թեմայով:

Հարցաթերթիկի նմուշ՝

Դասարան _____

1. Տանը համակարգիչ ունե՞ք:
2. Տանը ինտերնետ կա՞:
3. Որքա՞ն ժամանակ եք տրամադրում համակարգչին:
4. Ինտերնետում հաղորդակցման ի՞նչ միջոցներ գիտեք:
5. Դուք առցանց շփվո՞ւմ եք ընկերների հետ:
6. Ինտերնետում հաղորդակցման ի՞նչ միջոցներ եք օգտագործում:
7. Դուք օգտվո՞ւմ եք էլ. փոստից:
8. Ունե՞ք բլոգ:
9. Դուք ուղարկո՞ւմ եք էլեկտրոնային քարտեր:
10. Գիտե՞ք ցանցային էթիկայի կանոնները:
11. Ի՞նչ վտանգներ կարող են սպասել ձեզ ինտերնետում:
12. Ձեր ծնողների հետ խոսե՞լ եք ցանցային վարվելակարգի, ցանցում վարքագծի կանոնների մասին:

Հարցին. «Ի՞նչ է ձեզ համար ինտերնետը»: Դեռահասները պատասխանեցին, որ դա առաջին հերթին հաղորդակցման միջոց է, երկրորդ՝ ժամանցի, իսկ հետո՝ կրթության, տեղեկատվության որոնման միջոց:

Երեխաների և ծնողների մեծ մասը շատ ժամանակ է անցկացնում (օրական միջինը 3 և ավելի ժամ) տարբեր չափերում և ֆորումներում, սոցիալական ցանցերում, ինչը, նրանց կարծիքով, ընդլայնում է նրանց մտահորիզոնն ու աշխարհայացքը: Բնականաբար, սա այնքան էլ լավ չէ, քայց շատերի համար հեշտ չէ շփվել իրականում: Երբեմն պատահում է, որ

քեզ չեն հասկանում կամ քեզ միայնակ ես զգում, բայց համացանցում գտնում ես մարդկանց, ովքեր ունեն նույն հայացքներն ու հետաքրքրությունները: Եվ, ընդհանրապես, բոլոր ժամանակակից դեռահասները պետք է ունենան իրենց էջը ինչ-որ սոցիալական ցանցում:

Այն նորաձև է և հեղինակավոր (հարցվածների միայն 4%-ը չի օգտվում սոցիալական ցանցից): Յուրաքանչյուր ընտանիքի անդամ միջինում գրանցված է 2 կամ ավելի սոցիալական ցանցերում:

Կան այնպիսիք, ում համար ինտերնետը գիտելիք ձեռք բերելու անփոխարինելի գործիք է: Ստեղծաշարի մեկ հարվածով դուք ստանում եք տեղեկատվություն, որը կարող եք շատ ժամանակ ծախսել փնտրելու համար: Եվ այստեղ ամեն ինչ ամբողջությամբ երևում է՝ ցանկացած հանրագիտարան, տեղեկատու, հազվագյուտ կամ թանկ գիրք, որը դուք երբեք չեք գնել:

Դեռահասները սոցիալական ցանցերի վտանգն ու վնասը տեսնում են դրսևորված ինտերնետ կախվածության, կենդանի շփման համար ժամանակի բացակայության, ակադեմիական ցածր մակարդակի, տեսողության խանգարման մեջ: Հարցվածների մեկ չորրորդը չգիտի, թե որն է վտանգը, չեն տեսնում այն:

Արդյո՞ք ինտերնետը ազդում է երեխայի առողջության վրա: Կարծիքները բաժանվեցին. Մոտ 56%-ը կարծում է, որ ինտերնետն ազդում է առողջության վրա, իսկ 42%-ը՝ ոչ, հարցվածների 2%-ը դժվարանում է պատասխանել: Համացանցը երեխաներին չի պաշտպանում բացասական տեղեկատվությունից, ինչով հետաքրքրվել է սովորողների 13%-ը:

Սոցիալական ցանցեր այցելած աշակերտների միջին խումբն այսպիսի տեսք ունի՝ նա օգտագործում է ինտերնետը՝ իրեն ուրախացնելու համար, պարզապես հանգստանալու, ազատվելու ձանձրույթից: Համակարգչի մոտ անցկացնում է օրական 2 ժամ, իսկ հանգստյան օրերին՝ մինչև 8 ժամ: Նա առցանց հարթակում ունեցած իր հոբբիները թաքցնում է ծնողներից: Հարցվածների 50%-ը պատասխանել է, որ ժամանակի սղության զգացում, ցանցում ավելի երկար «նստելու» ցանկություն են ունենում: Մեծամասնությունը (75%) լսում է ծնողների նախատիքներն ու արգելքները իրենց առցանց անցկացրած ժամանակի վերաբերյալ: Իսկ հարցված դեռահասների 25%-ն ասում է, որ իրենց ծնողները երբեք չեն սահմանափակել կամ վերահսկել իրենց գործունեությունը համացանցում:

Ծնողները մեծ վնաս չեն տեսնում երեխաների՝ սոցիալական ցանցերում մշտական շփման մեջ: Հարցված ծնողների ավելի քան 55%-ին չի հետաքրքրում, թե իրենց երեխան ում

հետ է շփվում, ինչ տեղեկություններ է նա փնտրում սոցիալական ցանցերում՝ բացատրելով իր դիրքորոշումը երեխայի ընտրության և վարքի նկատմամբ վստահության զգացումով:

Ինչպես տեսնում եք, ծնողներն իրենք են վատ տեղեկացված երեխայի հոգեբանական և ֆիզիկական առողջության վրա տեղեկատվության ազդեցության վտանգների, ինտերնետից կախվածության ձևավորման մասին: Սոցիալական ցանցերի առկայությունը ժամանակակից երեխայի կյանքում անփոփոխ, ճանաչված իրականություն է: Այն, ինչպես ամեն բան, ինչը ստեղծված է մարդու ձեռքով, ունի իր դրական և բացասական կողմերը: Նոր տեխնոլոգիաները ծնում են նոր հիվանդություններ: Ինտերնետային կախվածությունը դրանցից մեկն է: Իսկ այն մարդը, ով ունի կախվածություն, վարքագծի խախտում, հոգեբանորեն առողջ չէ, հետևաբար՝ երջանիկ էլ չէ:

Ընտանիքի և դպրոցի կողմից տեղեկատվական անվտանգության դիտարկված խնդիրների համալիր լուծումը կարող է էապես նվազեցնել երեխային տարբեր տեսակի (բարոյական, նյութական, առողջական և այլ) վնասներ պատճառելու ռիսկերը: Ուստի աշակերտների տեղեկատվական անվտանգության ապահովումը դարձել է աշխատանքի առաջնահերթ ուղղություններից մեկը:

Եզրակացություն

Այսպիսով սովորողները հասկացան, որ համացանցն այն հարթակն է, որտեղ կարելի է գտնել կամ փոխանցել ցանկացած տեղեկատվություն, կատարել ցանկացած աշխատանք, սակայն չպետք է մոռանալ անվտանգության կանոնների պահպանման մասին, մասնավորապես՝

- կայքերում գրանցվելիս, հնարավորության դեպքում խուսափել անձնական տվյալների ներմուծումից՝ տան կամ բջջային հեռախոսի համարները, տան հասցեն,
- պետք է զգուշանալ սոցիալական ցանցի անձնական էջում նկարներ տեղադրելուց,
- գաղտնաբառերի հրապարակումից,
- բանկային տվյալների փոխանցումից:

Պարզաբանվեցին սոցիալական ցանցերի նշանակությունը ժամանակակից մարդու կյանքում, անձնական տեղեկատվության պաշտպանության նշանակությունը համացանցում:

Երեխաների և նրանց ծնողների մոտ ձևավորվեց համացանցում «անվտանգ» վարքագծի հմտություններ:

Բացահայտվեցին համացանցում երեխաներին սպասվող հիմնական վտանգները, ինչպես նաև մեխանիզմները, որոնք կարող են նվազագույնի հասցնել այդ ռիսկերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բուդունով Գ.Մ. Համակարգչային տեխնոլոգիաները կրթական ոլորտում. կողմ և դեմ. - Մ.: ԱՐԿՏԻ, 2006. - 192 էջ.
2. Խ.Քերոբյան և ուրիշներ, «Ինտերնետ հիմունքներ և կիրառություններ», «Հանրագիտարան Արմենիկա», Երևան 2003, 264 էջ,
3. Ս. Ս. Ավետիսյան, Ս. Վ. Դանիելյան, Ինֆորմատիկա 7-րդ դասարան, Երևան 2012, 111 էջ
4. Վ.Ա. Գալատենկո «Տեղեկատվական անվտանգության հիմունքներ», Գիտելիքի լաբորատորիա, 2008, 205 էջ.
5. <https://www.slideshare.net/Ohanyancollege/ss-46117603>
6. <https://center-gps.ru/hy/socialnye-seti/issledovatelckaya-rabota-po-teme-bezopasnyi-internet-doma.html>